Նա լռեց, որպէս մի եռացող հրաբուխ, իր ուժերը հաւաքելու համար, որ աւելի սաստկութեամբ դուրս հոսէ ներսի կրակը:

— Նա մեղաւոր չէր, պարոն բժշկապետ, — ասաց նա ցաւալի ձայնով, — նա սիրում էր ինձ, ես էլ սիրում էի նրան... Մենք ամենափոքր հասակից սիրում էինք միմեանց... Ես դեռ աղջիկ էի իմ հօր տանը, նա դեռ պատանի էր, դեռ նոր էր սկսել թիավարել: Լինում էր, որ ես ամբողջ գիշերը չէի քնում, նստած կտուրի վրայ, սպասում էի նրան: Նա գալիս էր, տանում էր ինձ ծովեզրը, դնում էր իր նաւակի մէջ, եւ մենք ամառային ամբողջ գիշերը լողում էինք ջրերի վրա... Ես գլուխս դնում էի նրա գրկում, նա թիակը մի կողմ էր դնում, եւ խելացի նաւակը ինքն իրան գնում էր եւ երբեք չէր խանգարում մեզ...

Վերջին խօսքերի միջոցին նա կարծես ամբողջ մարմնով թուլացաւ, գլուխը տատանոեցաւ, եւ ձեռքերը ընկան ծնկների վրայ:

— Մեր ծնողները գիտէին այդ բոլորը, բայց ներում էին մեզ, որովհետեւ մենք արդէն նշանուած էինք եւ հարսանիքի պատրաստութիւններ էին լինում... Այդ միջոցներում հեռու աշխարհից վերադարձաւ գազանը՛... Նրա մասին խօսում էին, թէ մի բեռն ոսկի է բերել... այդ գրաւեց իմ ծնողների ագահութիւնը... Նրանք ինձ բաժանեցին իմ սիրածից եւ տոեցին գազանին... Ես դրան էլ սկսեցի սիրել, բայց իմ սրտի մեծ մասը պատկանում էր առաջինին... Երբ ամուսինս տանից բացակայ էր լինում, երբ նա Մուշի կամ Բաղէշի կողմերը բեռ էր տանում, նա գալիս էր մեր տունը... Դրացիները սկսեցին փսփսալ միմեանց հետ, եւ բամբասանքը հասաւ ամուսնիս ականջին... Մի երեկոյ նա ինձ ասաց, թէ գնում է Դատոանից ցորեան բերելու, ես նրա համար ճանապարհի պաշար պատրաստեցի, իմ ձեռքով տարայ եւ տեղաւորեցի նաւակի մէջ: Նա ինձ համբուրեց, նստեց նաւակի մէջ եւ հեռացաւ: Ես ուրախ-ուրախ վերադարձայ տուն: Բայց, դու մի ասա, անիրաւը խաբեց ինձ... Գիշերի կէսից դեռ նոր էր անցել, նա բախեց իմ սենեակի դուռը... ես սարսափեցա... իմ սիրելին իմ մօտ էր... Երբ մենք ուշացանք բաց անելու, գազանը ոտքի մի հարուածով ջախջախեց դուռը եւ ներս մտաւ... Իմ արտասուքը, իմ աղաչանքը չկարողացան ամոքել անգութի բարկութիւնը... Նա իր դանակը իսկոյն ցցեց «նրաէ կուրծքի մէջ... տաք արիւնը դուրս ցայտեց վէրքից... Նա տատանոեցաւ եւ ընկաւ յատակի վրա... Յետոյ դրեց նրա դիակը խարարի մէջ եւ շտապեց տանել դէպի ծովեզրը... Գնանք, պարոն բժշկապետ, նա դեռ չէ մեռած, դեռ կարելի է նրան օգնել...

Վերջին խօսքերը արտասանեց նա բաւական բարձր ձայնով, բռնեց իմ ձեռքից եւ համարեա ուժով աշխատում էր տանել ինձ իր հետ: